ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2022/96

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Մասնակից՝ «Անգա-Տրանս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ» ծածկագրով գնանշման հարցում, ուսադիրների և բարձերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3518-2022 գրությամբ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 22.02.2022թ. թիվ 3/4/14326-22 գրության հիման վրա, 01.03.2022թ.-ին «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.03.2022թ.-ին:

01.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/96 համարի ծածկագիրը:

10.03.2022թ.-ին և 25.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.03.2022թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.02.2022թ. թիվ 3/4/14326-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ոստիկանության զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով՝ հանդերձանքի մատակարարման պայմանագրի շրջանակներում «Անգա-Տրանս» ՍՊԸ-ն էականորեն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ ըստ «Տեխնիկական բնութագիր»-ի՝ 2-րդ չափաբաժնով նախատեսված «Կոստյումներ, բաճկոն-տաբատ գունաքողարկող, սև՝ կիսաբամբակյա կեպիով» ապրանքատեսակը մատակարարվել է սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ Ձեզ միջոցներ ձեռնարկել նշված մասնակցին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու գործընթաց նախաձեռնելու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 01.03.2022թ.-ին գրությամբ դիմել է «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3518-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 04.03.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ԼՕ-2022/96 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն օրենքսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է Պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել Պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ նապատշաճ կլստարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն հոդվածի 1-ին մասի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ Պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Նշված հոդվածների համատեքստում պետք է արձանագրել հետևյալը՝

«Անգա-Տրանս» ՍՊԸ-ի և ՀՀ Ոստիկանության զորքերի միջև 17.08.2021 թ կնքված N ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1 պայմանագրի համաձայն «Անգա-Տրանս» ՍՊԸ-ն պարտավորվել է առավելագույնը մինչև 15.12.2021թ. արտադրել և մատակարարել՝

1. 1200 հատ «Կիսավերարկու՝ ձմեռային» (որից 800 հատը 3-րդ եռամսյակում, 400 հատը 4 եռամսյակում մինչև 15.12.2021թ.):

2. 500 հատ (լրակազմ) «Կոստյումներ բաճկոն-տաբատ գունաքողարկող, սև կիսաբրդյա կեպիով», (որից 300 լրակազմը՝ 3-րդ եռամսյակում, 200 լրակազմը 4 եռամսյակում մինչև 15.12.2021թ):

3. 50 հատ (լրակազմ) «Կոստյումներ տարազաբաճկոն-կիսատաբատ, կիսաբրդյա, ամենօրյա», (որից 30 լրակազմը՝ 3-րդ եռամսյակում, 20 լրակազմը 4 եռամսյակում մինչև 15.12.2021թ):

4. 100 հատ (լրակազմ) «Կոստյումներ բաճկոն-տաբատ կիսաբրդյա», (որից 50 լրակազմը՝ 3-րդ եռամսյակում, 50 լրակազմը 4 եռամսյակում մինչև 15.12.2021թ):

Հիշյալ բոլոր ապրանքատեսակների հումքը «Անգա Տրանս» ՍՊԸ-ն անխտիր պատվիրել է արտասահմանյան տարբեր ընկերությունների, որոնք հումքը պատրաստել և մատակարարել են 30-90 օրվա ընթացքում: Այդ պատճառով, կողմերի փախադարձ համաձայնությամբ 24.09.2021թ. կնքվել է պայմանագրի N 1 համաձայնագիրը, որով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը երկարաձգվել է 30 օրացույցային օր, այսինքն պայմանագրով նախատեսված մատակարարումների վերջնաժամկետ 2021թ. դեկտեմբերի 15-ը երկարաձգվել է 30 օրացույցային օրով, ստույգ մինչև 2022թ. հունվարի 14-ը: Պայմանագրով նախատեսված 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակների ամբողջ խմբաքանակը արտադրվել և ժամանակին մատակարարվել է Պատվիրատուին:

Մատակարարման ուշացման խնդիր է առաջացրել միայն պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակի մասով, այսինքն 500 հատ (լրակազմ) «Կոստյումներ բաճկոն-տաբատ գունաքողարկող, սև կիսաբրդյա կեպիով»

ապրանքատեսակի մասով: Բանն այն է, որ այդ ապրանքատեսակի գործվածքեղենը ստացվել է դեկտեմբերի 19-ին: Գործվածքեղենի ստացման ուշացման պատճառ է եղել Լարսի անցակետի տևական ժամանակով փակված լինելը: Գործվածքի ստացման մասին անհապաղ բանավոր տեղյակ է պահվել Պատվիրատուն որին, խնդրվել է զննելու ստացված գործվածքեղենը և տալու համաձայնություն այդ գործվածքով կոստյումների արտադրությունը սկսելու համար: Պատվիրատուն հավանություն է տվել գործվածքի որոկին և տվել է ժամկետ մինչև 24.12.2021թ. մատակարարելու ամբողջ խմբաքանակը, որը իրատեսական չի եղել, քանի որ ամբողջ խմբաքանակը պատրաստելու համար անհրաժեշտ է եղել ևս 4-5 աշխատանքային օրեր: Սակայն Պատվիրատուն իմպերատիվ ժամկետ է տվել մինչև 24.12.2021թ., հայտնելով, որ 24.12.2021թ.-ից հետո մատակարարումներ կատարելու դեպքում ապրանքները չեն ընդունվելու և բնականաբար վճարումներ չեն կատարվելու:

Որպես առաջին փորձանմուշներ «Անգա Տրանս» ՍՊԸ-ն 22.12.2021թ. Պատվիրատուին է մատակարարել 20 լրակազմ կոստյումներ: Սակայն, քանի որ Պատվիրատուն հրաժարվեց ևս 4-5 օր տրամադրել, որը անհնարին դարձրեց ամբողջ խմբաքանակի պատրաստումը և մատակարարումը, «Անգա Տրանս» ՍՊԸ-ն Պատվիրատուից ետ է պահանջել 22.12.2021թ. մատակարաված 20 լրակազմ կոստյումները:

Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N 13 ակտում Պատվիրատուն նշել է, թե իբր <<ապրանքը ետ է վերադարձվել մատակարարին տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով»: Ընդ որում նշված պատճառաբանության մասին մենք տեղեկացել ենք միայն 15.02.2022թ. պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումից:

Սա իրականությանը չհամապատասխանող պատճառաբանություն է, քանի որ նախ նման ակտ պետք է կազմվեր «Անգա Տրանս» ՍՊԸ-ի աշխատակիցների ներկայությամբ ու մասնակցությամբ, պետք է կոնկրետ նշվեր, թե արտադրանքի որ չափանիշները չեն համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին (գործվածքի բաղադրությունը, գույնը, կարի փևը, աքսեսուարների տեսքը, տեղակայումը և այլն) և դա պետք է հիմեավրովեր համապատասխան փորձաքննություններով: Այնինչ իրականությունն այն է, որ 20 լրակազմ կոստյումները ետ են վերադարձվել մեր պահանջով, քանի որ Պատվիրատուն հրաժարվելով դեկտեմբերի 24-ից հետո ապրանք ընդունելուց, չեր վճարելու մատակարարված 20 լրակազմ կոստյումների արժեքը, պատճառաբանելով, որ տեղի է ունեցել թերմատակարարում: Չնայած, որ 24.12.2021թ. դրությամբ արդեն իսկ արտադրված էր կոստյումների որոշ խմբաքանակ, «Անգա Տրանս» ՍՊԸ-ն հարկադրված 25.12.2021թ.

դադարեցրել է կոստյումների հետագա արտադրումը և քանի որ ՍՊԸ-ն այդ օրվա դրությամբ այլ պատվերներ չի ունեցել, 25.12.2021թ-ից աշխատողներին ուղարկել է նախատոնական արձակուրդ: Սակայն ի զարմանս մեզ, 29.12.2021թ. Պատվիրատուից բանավոր տեղեկատվություն ենք ստացել, որ մինչև 30.12.2021թ. պատրաստ են ընդունելու վերը նշված չմատակարարված ապրանքները:

Դա շատ տարակուսելի դիրքորոշում էր, քանի որ դեռևս 21.12.2021թ. N Ա-35 գրությամբ խնդրել էինք տրամադրելու ընդամենը 4-5 աշխատանքային օր ամբողջ խմբաքանակը մատակարարելու համար, որին գրավոր պատասխան չէր տրվել, միայն բանավոր հայտնվել է, որ 2021թ. Դեկտեմբերի 24-ից հետո մատակարարումներ կատարվելու դեպքում, լքստակստուսուիսծ ատդրանքները չեն ընդունվելու: Եթե մինչև դեկտեմբերի 30-ը ապրանքներ ընդունելու հնարավորության մասին մեզ ավելի վաղ տեղեկացվեր, ապա առավելագույնը մինչև դեկտեմբերի 29-ը «Անգա Տրանս» ՍՊԸ-ն միանգամայն ի վիճակի կլիներ արտադրելու և մատակարարելու ամբողջ 500 լրակազմ կոստյումները: 2021թ. դեկտեմբերի 24-ից հետո մատակարարումներ չկատարելու Պատվիրատուի պահանջը հակասության մեջ է նաև պայմանագրի N1 համաձայն ագրի հետ, որով պայմանագրով նախատեսված ապրանքների արտադրումը և մատակարարումը երկարաձվել է 30 աշխատանքային օրով մինչև 14.01.2022թ., սակայն մեզ նախազգուշացվել է, որ դեկտեմբերի 24-ից հետո մատակարարված ապրանքները չեն ընդունվելու, առավել ևս դրանց դիմաց վճարումներ չեն կատարվելու:

Վերոգրյալը հիմնավորվում է նաև «Անգա Տրանս» ՍՊԸ-ի կողմից ԼՂ Ոստիկանության զորքերի հրամանատարին 22.09.2021թ. ուղարկված N Ա-030, 21.12.2021թ. ուղարկված N Ա-035 և 18.01.2022թ. ուղարկված N Ա-001 գրություններով, որոնց պատճենները բաղկացած «5» թերթից, սույն դիրքորոշմանը կից ուղարկվում է: Տարակուսելի է նաև Պատվիարտուի կողմից պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելը 15.02.2022թ: Մինչև պայմանագրի լուծելը «Անգա Տրանս» ՍՊԸ-ն որևէ կերպ իրազեկված չի եղել չմատակարարված ապրանքների մասով պայմանագրային պարտավորությունները կատարելու հնարավորության մասին:»:

Վերոգրյալի հիման վրա՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Անգա Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը դիրքորոշմանը կից ներկայացրել է ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալ Հ. Բաբայանին 22.09.2021թ.-ին

ուղարկված թիվ Ա-030, 21.12.2021թ.-ին ուղարկված թիվ Ա-035 և 18.01.2022թ.-ին ուղարկված թիվ Ա-001 գրությունների պատճենները՝ «5» թերթից:

4. <u>ՍՑ-LO-2022/96 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, բացի այլ չափորոշիչներից սահմանվել է նաև, որ մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար:

iv. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 3-րդ և 4-րդ եռամսյակի մինչև 15.12.2021թ.-ը:

v. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 23.12.2021թ.-ին կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված թիվ 13 եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ մատակարարված ապրանքը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պայմաններին (3-րդ եռամսյակում մատակարարման ենթակա ապրանքը մատակարարվել է 22.12.2021թ.-ին):

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 15.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 4/117 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության

զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի կողմից «Տեխնիկական բնութագիր»-ի 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ «Կոստյումներ, բաճկոն-տաբատ գունաքողարկող, սև՝ կիսաբամբակյա կեպիով» ապրանքատեսակը մատակարարվել է տեխնիկական բնութագրի պահանջներին անհամապատասխան:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Պատվիրատուն /Գնորդը/ իրավունք ունի միակողմանի /կամ մասնակի/ լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի /Գնորդի/ համար ընդունելի ժամկետում: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2022 թվականի փետրվարի 14-ին մասնակի միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3518-2022 գրությամբ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ուսադիրների և բարձերի, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2-րդ բաժնի համաձայն՝

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ուսադիրների և բարձերից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ուսադիրների և բարձերից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 2-ով մատակարարման ժամանակացույցով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 3-րդ և 4-րդ եռամսյակի մինչև 15.12.2021թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 15.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 4/117 ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ հաշվի առնելով, որ Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 23.12.2021թ.-ին կազմված Եզրակացությամբ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ մատակարարված ապրանքը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պայմաններին (3-րդ եռամսյակում մատակարարման ենթակա ապրանքը մատակարարվել է 22.12.2021թ.-ին):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման փաստական և իրավական հանգամանքներին, որով վերջինս փաստում է, որ պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը տեղի է ունեցել գործվածքների ստացման ուշացման պատճառով, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Մասնակցի կողմից ընթացակարգի քննության ընթացքում չներկայացվեցին բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեին ներկայացված փաստական հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.03.2022թ.-ի թիվ 26/26-1/3518-2022 գրությամբ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/96 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**